ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1962 Общественные науки

ՀԱՄԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

Творчество

Ամսագրի յոթերորդ համարը բացվում է Ն. Ս. Խրուշչովի ուղերձով հասցեագրված ամերիկյան ժամանակակից պրոգրեսիվ նկարիչ և հասարակական գործիչ Ռոքուել Քենթին նրա ծննդյան 80-ամյակի առթիվ:

«Դեպի ընդհանուր զինաթափման և խաղաղության համաշխարհային կոնգրեսը» խորագրի տակ զետեղված են Մ. Ալպատովի և Ռենատո Գուտուզոյի հոդվածները:

Արվեստը ըմբոստանում է ընդդեմ պատերազմի և նույն այդ տրամադրությամբ կազմակերպում մարդկանց: Տարբեր երկրների ու ժողովուրդների արվեստների փոխադարձ ցուցահանդեսները, միջազգային գեղարվեստական ցուցահանդեսները, քննարկումները, վեճերն ու զրույցները կարող են արվեստի ֆորումից փոխարկվել խաղաղության ֆորումի: Խաղաղության համար մղվող պայքարի այդ մեծ գործի առջևից ընթանում է սովետական արվեստը, որը հաղթահարելով խոչընդոտները իր էությամբ, գեղարվեստական միջոցների արտահայտությամբ պետք է լինի ժամանակակից, համամարդկային, որի շնորհիվ նա կկարողանա իր գաղափարներով համակել տարբեր ժողովուրդների:

Այս միտքն է շարադրված Մ. Ալպատովի «Արվեստը՝ խաղաղության պաշտպան» հոդվածում: Իտալացի անվանի նկարիչ Ռենատո Գուտուզոն իր հոդվածում շարադրում է ռեալիզմի *ժամանակակից* հասկացողությունը՝ մարդու և բնության նոր կապի, մարդկանց նոր փոխհարաբերությունների, նոր կյանքի առաջացման, այն վերարտադրելու նոր լեզվի, ձևի և բովանդակության նոր փոխհարաբերության հարցերը:

Ամսագրում ուշագրավ արձագանք են գտել վերջերս կազմակերպված գեղարվեստական ցուցահանդեսները: Լ. Զինգերի հոդվածը («Ժողովրդի նկարիչը») նվիրված է սովետական արվեստի ավագագույն ներկայացուցիչներից մեկի՝ Կ. Յուոնի ստեղծագործությանը: Մ. Խաչատրովսկայան բարձր գնահատական է տալիս ՍՍՌՄ Գեղարվեստների ակադեմիայի սրահներում բացված Գ. Վերեյսկու անհատական ցուցահանդեսին, իսկ Ա. Վասնեցովի, Գ. Զախարովի, Տ. Սոկոլովայի և Ն. Ցեյտլինի ցուցահանդեսը իր հակասական տպավորություններով հանդերձ հետաքրքրական լուսաբանում է ստացել Գ. Պոսպելովի հոդվածում:

Ընթերցողները այս համարում կարող են ծանոթանալ Թեխտեևի գծանկարներին նվիրված Ն. Լևիտինի հոդվածին:

Հուզող հարցեր են շոշափված Մ. Իլյինի «Կանաչ ճարտարապետության համար» հոդվածում: Ընթերցողները Ա. Տիխոմիրովի ելույթի միջոցով կարող են ծանոթանալ Բուդապեշտի թանգարանի հարստություններին, իսկ Խորստ Էների շարադրանքում նրանք հետաքրքիր տեղեկություններ կստանան Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայում վերջին տարիներին ստեղծված մի քանի գործերի մասին:

ИСКУССТВО

«Բարձր կոչում»—այս խորագիրն է կրում ամսագրի 7-րդ համարի առաջնորդող հոդվածը, ուր արծարծվում են արվեստագետի բարձր կոչման արժանանալու համար երիտասարդ կադրերի հետ, հատկապես գեղարվեստի ուսումնական հաստատություններում ու ստեղծագործական միություններում մշտական աշխատանք կատարելու հարցերը:

Ս. Դրուժինինի հոդվածը նվիրված է անվանի նկարիչ Պավել Կորինի ծննդյան 70-ամյակին, նկարիչ, որի ստեղծած աշխատանքները հետաքրքիր երևույթ են ռուսական սովետական նկարչության բնագավառում: Իր խոսքը նկարչի մասին շարադրելով որպես հիշողություններ, հեղինակը կարողանում է ստեղծել արվեստագետի գեղարվեստական մի կերպար, որի ողջ կյանքը նվիրված է եղել մարդկային գեղեցիկ, վեհ գաղափարների վերհանմանը, որոնց արտահայտման համար նա գտավ իր մեծ ձևերի կորինյան ոճը: Հոդվածին կից լուսանկարների թվում է

նաև Պ. Կորինի հետաքրքիր գործերից մեկը՝ Մարտիրոս Սարյանի դիմանկարը:

Ամսագրում էջեր են նվիրված նաև Լենինգրադում և Մոսկվայում բացված Գ. Վերեյսկու ստեղծագործությունների ցուցահանդեսին, Ս. Գերասիմովի նոր բնանկարներին, լատվիական բնության երգիչ Վ. Պուրվիտին: Վ. Ռինդինի փոր հոդվածում բնորոշված է վրացական բատերական նկարչության խոշորագույն դեմքերից մեկի՝ Իակլի Գամրեկելու ստեղծագործական կերպարը:

«Սովետական արվեստի պատմությունից» ընդհանուր վերնագրի տակ զետեղված է Ի. Աբրամովսկու հոդվածը՝ նվիրված 30-ական թվականներին կազմակերպված «Սոցիալիզմի ինդուստրիան» նշանավոր ցուցահանդեսին, որի կազմակերպիչն ու հիմնական նախաձեռնողն էր Սերգո Օրջոնիկիձեն: Հատկապես նշանակալից է այդ ցուցահանդեսին նախորդող այն մեծ պրոբը, որը համակել էր բոլոր ռեսպուբլիկաների արվեստագետներին և որը տվեց իր հոյակապ արդյունքները: «Սոցիալիզմի ինդուստրիան» ցուցահանդեսում ներկայացված աշխատանքների զգալի մասն իր պատվավոր տեղը գրավեց սովետական արվեստի ոսկե ֆոնդում:

Ամսագրում, նկարչի նոթերի ձևով հետաքրքիր հոդված է տեղավորված Ավստրալիայի արվեստի արդի վիճակի մասին:

Ա. Ս. Պուշկինի անվան կերպարվեստի բանգարանի հիմնադրման 50-ամյակի առթիվ ամսագրում զետեղված են Ա. Զեզոդաևի և Վ. Ցվետաևայի հոդվածները, ուր արժեքավորվում է բանգարանի հավաքածուն: Այն դասվում է համաշխարհային խոշորագույն բանգարանների շարքը:

Ռ. Դուբերի «Ոռմնանկարների վերանորոգումը Իտալիայում», ինչպես նաև նկարիչ-հանապարհարդ Պ. Միխայլովին նվիրված հոդվածները ուշագրավ են իրենց բնագրված նյութի հետաքրքրությամբ:

Մ. Բասկինը գրախոսելով Ս. Մոժեյագունի «Աբստրակցիոնիզմը էսթետիկայի քայքայում է» գիրքը, հրան հիմնականում դրական գնահատական է տալիս:

Թե-պեռ միշտ, ամսագրում տեղավորված են սեղմ տեղեկություններ:

ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ

История СССР

Երկամյա հանդեսի 4-րդ համարում Ա. Ա. Լեսկին իր ընդարձակ հոդվածով անդրադարձել է աշխատավոր զանգվածների բնակարանային պայմանների արմատական բարելավման համար Կոմունիստական պարտիայի մղած պայքարի հիմնական փուլերին:

«Սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում Սովետական Միության ազգային ռեսպուբլիկաների տնտեսաբերական զարգացման մակարդակների հավասարեցումը» վերնագրով հոդվածում Յու. Ֆ. Վորոբյովը Ուկրաինական, Բելոռուսական, Ղազախական ՍՍՌ-ների և Միջին-ասիական ու անդրկովկասյան ռեսպուբլիկաների համադրությամբ ցույց է տվել նրանց էկոնոմիկայի մեջ տեղի ունեցած արմատական փոփոխությունները, ազգերի տնտեսական մերձեցման պատմական պրոցեսը:

Ս. Բ. Օկունի հոդվածում խոսվում է 1812 թվականի հայրենական պատերազմում Ռուսաստանի ձեռք բերած հաղթանակի գործում ռուս ժողովրդի վճռական դերի մասին: Ն. Լ. Ռուբինշտեյնը անդրադարձել է 19-րդ դարում Ռուսաստանում մանր ապրանքային արտադրության և կապիտալիզմի զարգացման ճարցին: Հոդվածը բանավիճային բնույթ ունի և ուղղված է հանդեսի 1962 թ. երկրորդ համարում «19-րդ դարի Ռուսաստանի մանր ապրանքային կացութաձևի մասին» Պ. Գ. Ռինձյունսկու հոդվածի դեմ:

Հաղորդումներ բաժնում Վ. Գ. Ժելեզովսկայան ՍՍՌՄ-ում բամբակագործության սոցիալիստական վերակառուցմանը նվիրած հոդվածում փորձել է արխիվային և հրապարակված աղբյուրների հիման վրա հետազոտել մեր երկրի պայքարը նախապատերազմյան տասներեք հնգամյակի տարիներին բամբակի ասպարեզում օտարերկրյա կապիտալիստներից ունեցած կախվածը վերջ տալու համար:

1918 թ. գարնանը և ամռանը Վ. Ի. Լենինը ավելի քան 15 հեռագիր ու գրություն է ուղարկել Պենզայի նահանգի պարտիական ու սովետական աշխատողներին: Վ. Ֆ. Մորոզովը, հիմնվելով Մոսկվայի և Պենզայի արխիվներում հայտնաբերված այդ փաստաթղթերի վրա, փորձել է հիշեցնել Լենինի ուղարկած մի շարք հեռագրերի ամսաթվերը, Վ. Ի. Լենինի ցուցումների նշանակությունը Պենզայի նահանգում Սովետական իշխանության ամրապնդման գործում Պենզայի կոմունիստների պայքարի համար: Այս բաժնում հրապարակված են նաև Ա. Խ. Գորֆունկելի հոդվածը 17-րդ դարի ռեգրի գյուղացիական պատերազմի պատմական նշանակության մասին:

Քննադատության և գրախոսության բաժնում հրապարակված է Մ. Լ. Բոգդենկոյի և Ի. Ի. Զելենինի ընդարձակ հոդվածը, որտեղ խոսվում է այն մասին, թե սովետական պատմաբանների ու տնտեսագետների վերջին տարիներս լույս

տեսած հիմնական աշխատություններում ինչպես են լուսաբանվում ՍՍՌՄ-ի գյուղատնտեսության կոլեկտիվացման ու կոլտնտեսային շինարարության կարևորագույն հարցերը:

ВОПРОСЫ ИСТОРИИ КПСС

Երկամսյա հանդեսի 3-րդ համարում առաջին անգամ հրապարակված են Կ. Մարքսի մի շարք նոր փաստաթղթեր՝ նրա նամակները Ա. Կուսիս և մի նամակ՝ հասցեագրված Պ. Լաֆարգին:

ՍՄԿՊ 22-րդ համագումարի միջազգային նշանակությանն է նվիրված Ռումինիայի բանվորական պարտիայի Կենտկոմի Քաղբյուրոյի անդամության թեկնածու Լեոնտե Ռեուտուի հոդվածը:

1917 թվականի մարտին և ապրիլի սկզբներին պարտիայի տակտիկայի մի քանի հարցերին է նվիրված Վ. Ե. Եվգրաֆովի ծավալուն հոդվածը: 1917 թ. մարտ-ապրիլի սկզբներին վերաբերող՝ Կենտրոնական Կոմիտեի, տեղական խորհրդային պարտիական կազմակերպությունների փաստաթղթերի և այլ նյութերի վերլուծությունը, ասված է հոդվածում, վկայում է, որ, չնայած հաղթականության և կարևորագույն հարցերում դեկավար հիմնարկների անորոշ, իսկ մի շարք դեպքերում սխալ դրույթներին, բոլշևիկները այն ժամանակ մասսաների ռևոլյուցիոն շարժումը գլխավորող միակ ուժն էին երկրում: Իրենց ամբողջ գործելակերպով նրանք ժողովրդական զանգվածներին նախապատրաստում էին գալիք մարտերին ընդդեմ բուրժուազիայի: Ուստի, նիշտ չէ պնդել, ինչպես վարվում էր, օրինակ, Ստալինը, որ պարտիան, ամբողջությամբ վերցրած, այն ժամանակ սխալ դիրքավորում ուներ ռևոլյուցիոն տակտիկայի կարևորագույն հարցերում:

Մ. Մ. Վասերի «Պարտիայի մեջ անարխո-սինդիկալիստական թեման ջախջախումը» վերնագրով հոդվածում լուսաբանվում է պարտիայի պայքարը «բանվորական օպոզիցիայի» դեմ այդ հակապարտիական խմբի երևան գալուց մինչև նրա մնացորդների վերջնական ջախջախումը ՌԿ(բ)Պ XI համագումարում և նրա լիդերների վտարումը պարտիայից 30-ական թվականների սկզբներին:

Հիտլերյան Գերմանիայում կոմունիստների գլխավորությամբ սովետական ռազմիկների ազատագրական պայքարին նվիրված հոդվածում Ե. Ա. Բոդոսկին բազմաթիվ փաստաթղթերի հիման վրա վեր է հանել Հայրենական Մեծ պատերազմի տարիներին ֆաշիստական Գերմանիայում սովետական մարդկանց ազատագրական շարժման խոշոր օջախներից մեկի պատմությունը: Այդ ընդհատակյա հայրենասիրական կազմակերպությունը գործել է Հարավային Գերմանիայում 1943 թ. սկզբներին և կոչվել է «Ռազմագերիներ եղբայրական համագործակցություն», իսկ գեստապոյի փաստաթղթերում անվանված է «Թշնամի ռազմագերիների գաղտնի կոմունիստական կազմակերպություն»:

Հաղորդումներ բաժնում Վ. Յու. Սամեղովի հոդվածում լուսաբանված են 1905 թվականի «Բաֆու» լեգալ թերթը բոլշևիկների ձեռքին գտնվելու, այն որպես ՌՍԴԲՊ Բաքվի կազմակերպության անպաշտոնական օրգան օգտագործելու մի շարք հարցեր:

Ն. Պ. սիբելդինը իր հաղորդման մեջ ցույց է տվել Լենինի գլխավորած ՌԿ(բ)Պ Կենտկոմի վճռական դերը 1918 թվականի աշնանը Արևելյան ռազմաճակատում մարտական գործողությունների մեջ բեկում ապահովելու գործում:

Այս բաժնում տպագրված են նաև Ս. Ֆ. Մարկովի «Գյուղական պարտիական կազմակերպությունների ամրապնդումը մասսայական կոլտնտեսային շարժման նախապատրաստման շրջանում» և Վ. Ի. Կուզմինի «Պարտիան որպես բանվոր դասակարգի աշխատանքային վերելքի կազմակերպիչ» հոդվածները:

Հանդեսի այս համարում հրապարակված են ՌՍԴ(բ)Պ Կենտկոմի Բյուրոյի 1917 թ. մարտի արձանագրությունները ու բանաձևերը: Այդ փաստաթղթերն արտացոլում են բոլշևիկյան պարտիայի և նրա դեկավար կենտրոնի՝ ՌՍԴԲՊ Կենտկոմի բյուրոյի գործունեությունը Փետրվարյան ռևոլյուցիայից մինչև Վ. Ի. Լենինի արտասահմանից վերադառնալը:

Փաստաթղթերը ցույց են տալիս նաև, որ այդ շրջանում Ստալինը շատ հարցերում սխալ դիրքավորում է ունեցել: Նա ըստ էության հանդես չի եկել Կամենևի մենշևիկյան գծի դեմ, կողմնակից է եղել հաշտության հարցում ժամանակավոր կառավարության վրա հենում գործադրելու բաղաքականությանը, հնարավոր է համարել Յիմերվալդ-Կինտալի պլատֆորմի վրա մենշևիկների հետ միավորվելուն: Բնորոշ է, որ արդեն այդ ժամանակ ՌՍԴԲ(բ)Պ Կենտկոմի Բյուրոյի անդամները ուշադրություն են դարձրել Ստալինի անձնական բացասական գծերի վրա:

Վ. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ